

ԱՍՏՎԱԾԱՇԱՀԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ  
ԿԻԼԻԿՅԱՆ ԲԱՆԱՅՅՈՒՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ

1915 թ. Մեծ եղեռնից և Կիլիկիայի պարպումից (1921 թ.) հետո հրաշքով իրկված, սարբեր երկրներ տարադրված, սպա՝ 1946–1948 թթ. Խորհրդային Հայաստանում հանդրմանաձև հայրենադարձներով, Կիլիկիայի՝ Զեյթունի, Մարաշի, Հաճընի, Ուրֆայի, Քեսաբի, Բեյլանի, Մուսսա լեռան բարբառներով, նաև թուրքերենով, 50 տարիների ընթացքում մեր գրի առած բանահյուսական նյութերն ու ազգագրական ղիտարկումներն ուսումնասիրելիս պարզ է գտնում, որ աստվածաշնչային դադափարները կիլիկիացիներին ուղեկցել են նրանց ողջ կյանքի ընթացքում՝ ծննդից մինչև մահ:

Կիլիկիայի հայերը նոր ծնված երեխային համարել են Աստծո սլարգև, որին առաջին հերթին գրանցել են եկեղեցու Մայր մատյանում և մինչև նրա քառասունքն անսպաճան մկրտել են, մանավանդ եթե մանուկը վտիտ է եղել կամ հիվանդ, քանի որ նրանք հավատացել են Աստծո և Ս. միոնի գերբնական զորությունը: Այս նպատակով մանկան բարձի տակ կամ անկողնու մոտ Աստվածաշունչ են դրել, իսկ երբ նա սկսել է խոսել՝ առաջինը Տերունական աղոթքն են սովորեցրել նրան:

Երբ տղան և աղջիկը հասունացել են ամուսնություն համար, ծնողները դիմել են եկեղեցու միջնորդությանը, որպեսզի նրանց միությունը քրիստոնեական Ս. պսակի արժանանա: Քանի որ, ըստ կիլիկյան հավատալիքի, երիտասարդ զույգի բախտը տնօրինվում է երկնքում «Ասրծա ամրում» [Մ.լ.]<sup>1</sup> (Աստծո հրամանով): Այդ դադափարը Մուսսա լեռան հեքիաթներում մարմնավորվում է «Ըսպիտիկ մըրվըքիմ հալվիլըրի» [Մ.լ.] (Սպիտակ մորուքով ալեոբի) կերպարում: Գետի ահուներին նստած ալևոր ձերուներն իրար է կապում աղջկա ու տղայի բախտերը և նետում դեպ: Հոսոյ գետը խորհրդանշում է անվերադարձ ընթացույ և հարատևող կյանքը, իսկ նորապսակ զույգը, կյանքի հորձանուտի մեջ մտնելով, պետք է սրբագործի «Աճեսցուք եւ բազմացարուք» աստվածաշնչային պատգամը:

Եվ երբ Աստված իր պարզեած հոգին ետ է վերցրել, ննջեցյալի գին գրվել է եկեղեցու հոգետանը, որպեսզի հաջորդ օրը հուղարկավորության արարողությամբ ուղեկցվի մինչև գերեզմանատուն: Իսկ հետագայում, վառվող մոմերով կատարվող եկեղեցական հոգեհանգիստը նպատակ ունի երկնային արքայության դրախտի արժանացնել ննջեցյալին: Ուստի սգա-

<sup>1</sup> Այս և հետագա բանահյուսական մեջբերումները (կից թարգմանություններով) կատարված են մեր ժողովածուներից: Բարբառային ցուցիչները նշված են հավավումներով՝ [Մ.լ.] - Մուսսա լեռ, [Զ.] - Զեյթուն, [Մ.] - Մարաշ, [Հ.] - Հաճըն, [Ք.] - Քեսաբ, [Բ.] - Բեյլան, [Ու.] - Ուրֆա:

կիր Հարադատներին սփոփում են «Աստված Հողին լուսավորի», «Լույսերուն մեջը պառկի», «Հողին լույս դառնա» օրհնանք-մաղթանքներով:

Աստվածաշնչային գաղափարներն իրենց գեղարվեստական արտացոլումն են գտել կիրիկիացիների ժողովրդական տարաբնույթ ստեղծագործություններում՝ հեքիաթներում, գրույցներում, օրորոցային, կենցաղային և տոնական երգերում, առած-ասացվածքներում, օրհնանք-անեծքներում, հանելուկներում, աղոթքներում և նույնիսկ պատմական երգերում և Մեծ եղեռնից վերապրողների սլասմած հուշերում: Աստվածաշնչային գաղափարներով օծված բանավոր ստեղծագործությունները պատմականորեն, դարերի ընթացքում ձևավորվել են և ժառանգաբար ավանդվել՝ դաստիարակելով ու թրծելով իրարահաջորդ սերունդներ: Նրանք մշտապես հավատարիմ են մնացել ամենաղոր Աստծո պատվիրաններին և նրա միածին որդու՝ Հիսուս Քրիստոսի քարոզած մարդասիրական, խաղաղասիրական և ինքնակատարելագործման ուսմունքին: Քանի որ կիրիկիացիների առած-ասացվածքների հիմքում գրեթե միշտ ընկած են Աստվածաշնչի «Առակաց գրքի» ե այլ բաժինների խորիմաստ ասույթները, և, որպես հղում, մշտապես հիշատակվում է ամենակարող Աստծո անունը. «Աստուծ գիշը զլայռը, գրթիլը՝ զձուռայնը» [Մ.1.] (Աստված կտեսնես ստորը, կլնի ձյունը), «Աստուծ զիտի վէր շարդութը» [Մ.1.] (Աստված զիտի իր դատաստանը), «Աստուծ չվախնուղէյն իրմէյն վախցէյր» [Մ.1.] (Աստուծու չվախցողից՝ վախցիր): «Ասպօծ ուղույթան հիտն է» [Զ.] (Աստված ճշմարիտի հետն է): Բնության մեջ ամեն ինչ կատարվում է նրա հրամանով. «Ասպօծ ամրը չէնէ նէ՝ եափրօխ չթընդօ» [Զ.] (Աստված եթե հրաման չտա՝ տերև չի շարժվի): Մեծ է Աստծո ողորմածությունը. «Աստուծ՝ մինծ, հօցը՝ պղտէկ» [Բ.] (Աստված մեծ է, հօցը՝ պղտիկ): Աստված նաև գթառատ է. «Ասպօծ դէվօծ պլոյնը անութը չի ձգէ» [Ը.] (Աստված իր տված բերանը անոթի չի թողնի): Աստված իր բոլոր ստեղծած էակների պահպանն է. «Ասվըծուն պէհօծ մաղըն՝ զէլը չուտէ» [Ը.] (Աստծո պահած դաւը՝ դայլը չի ուտի): Սակայն իրատես և իրապաշտ կիրիկիացիների համար «Ասպօծ վիյէն վայ չիշնօ՝ դէմդ գուհանօ» [Զ.] (Աստված վերևից վար չի շնչի՝ դեմդ կհանի): Եղբակացույթյունը հետևյալն է. «Ասպօծ ասօ՝ մուհյօմ չէս մօնօ» [Զ.] (Աստված կանչիր՝ կարոս չես մնա)<sup>2</sup>:

Եվ եթե մարդ արարածը բարի է, նրա աստվածահաճո գործերն արժանի են գառնում Աստծո օրհնությանը. «Աստված օրհնէ զքէզ» [Ը.] (Աստված օրհնի քեզ): Աստված ոչ միայն բնության ստեղծողն է, այլև՝ կյանք պարգևողը. «Ասպօծ իրկան կյանք տօ քիզ» [Զ.] (Աստված երկար կյանք տա քեզ), «Ասպօծ մինծ է՝ ուղույթթօնը քիզ թըղ ըննօ» [Զ.] (Աստված մեծ է՝ սղորմությունը քեզ թող լինի): Աստված նաև բարեկեցություն արարող է. «Աստուծ պէրէքէթ իաս քէ» [Մ.1.] (Աստված առատություն տա քեզ): Կամ՝ «Աստուծ քէսէիզ պօլութին իտօ» [Մ.1.] (Աստված քսակիզ առատություն տա): «Աստուծ մէկը հաղօյ էնէ» [Ը.] (Աստված մեկը հաղար անի): Աստված նաև բարեգութ է. մարդկանց նպատակներն ու ծրագրերն

<sup>2</sup> Վ. Ս վ ա գ լ յ ա ն. Մուսա լեռ. - Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետև՝ Մուսա լեռ). հ. 16, Երևան, 1984, էջ 143.

<sup>3</sup> Վ. Ս վ ա գ լ յ ա ն. Կիրիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդույթները (այսուհետև՝ Կիրիկիա). Երևան, 1994, էջ 210:

իրականացնող. «Ասպօծ մույօզիդ տօ» [Զ.] (Աստված մուրազի տա): Աստված նաև մարդկանց ուժ, զորութիւնն տվողն է. «Աստուծ զուվէթ թըղ ուղու քէ» [Բ.] (Աստված ուժ թող տա քեզ): Այս բոլորով հանդերձ Աստված նաև գթառատ է. «Աստուծ զքէ ծառուց, վըտտուց չիսգէ» [Մ.1.] (Աստված ոտ ու ձեռքից քեզ չթողնի): Կիրիկիացիները մշտապես շրջապատված են եղել թշնամիներով, հետևաբար նրանց օրհնանքներում այդ գաղափարը ևս իր արտացոլումն է գտել. «Ասվօծ տուչմանու ձէյք չձգէ քիղ» [Զ.] (Աստված քեզ թշնամու ձեռք չթողնի): Իսկ ավելի ստույգ՝ 1915 թ. երիտթուրքերի կողմից կազմակերպված Մեծ եղեռնի գառնութիւնները ցմրուր ճաշակած և իրենց բնօրրանը կորցրած կիրիկիացիների համար ամենասարսափելին դաժան թուրքի կերպարն է, որից Աստված հեռու պետք է պահի. «Ասվօծ թուլքան ձառը չիսկէ զքէ» [Զ.] (Աստված քեզ թուրքի ձեռքը չթողնի) և այլն<sup>4</sup>:

Կիրիկիացիների անեծքները, ի տարբերութիւն օրհնանքների, շատ սակավ են: Այս հանգամանքը բացատրվում է երկու պատճառով: Նախ՝ նրանք հավատարիմ են մնացել աստվածաշնչային «Մի՛ հայհոյիր, մի՛ չարախոսիր, մի՛ անիծիր» պատգամներին և երկրորդ՝ նրանք աննկարագիր, չար մարդու սլափիժը վերապահել են Աստծո դատաստանին՝ բանադրելով. «Աստուծ մէն գտնօս, իշալլա» [Բ.] (Աստուծը գտնես, երանի), «Ասվօծ հօխէդ իգօ» [Մ.] (Աստված հախիյդ դա), «Աստուծ չուսօ զսմամիդ» [Զ.] (Աստված քեզ բախտ չտա), «Աստուծ փիւրիդ հացին թըղ չկիշտացնէ» [Մ.1.] (Աստված փորդ հացով թող չկիշտացնի)<sup>5</sup>:

Կիրիկյան ժողովրդական հանելուկների մեջ ևս առկա են աստվածաշնչային կերպարներ ու գաղափարներ.

Նա՛ մար ունցօժը,	Ո՛չ մայր է ունեցել,
Նա՛ ալը տուտ.	Ո՛չ էլ հայր.
Ան օ՞վն է [Մ.1.]:	Այդ ո՞վ է:

«Աղամն է» լինում է պատասխանը՝

Տիեզերքի և մարդկութեան արարչագործ Աստված, թեպետ ինքն է կյանք ու հոգի պարգևողը, ինքն է նաև հետ վերցնողը.

Ադ ի՞նչն է, ադ ի՞նչն է.

Աստված՝ կուտա, Աստված՝ կառնէ [Ու.]:

[Հոգի]

Եվ կամ՝

Աստված՝ կշարէ, մարդը՝ կքակէ.

Ադ ի՞նչն է [Ու.]:

Պատասխանը՝ առատութեան և բարգաձաճութեան խորհրդանիշ նուազ է:

Աստծո որդու՝ Հիսուս Քրիստոսի կերպարը ևս իր գեղարվեստական արտացոլումն է գտել կիրիկիացիների հանելուկներում.

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 243-244:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 238:

<sup>6</sup> Մուսա լեռ, էջ 174:

Ճերմակ տաճար.

Քրիստոսը մէջը կֆռֆռա [Ու.]:

[Աչքի բիրը]:<sup>7</sup>:

Ձէ՞ որ աչքին լույս տվողը բիրն է, իսկ Քրիստոսի ուսմունքը լույս է տալիս մարդկային իմացական կյանքին:

Քրիստոսի կերպարը, որսլես իմացական կյանքի խորհրդանիշ, կիրիկիացիների համար դարձել է բարոյականության չափանիշ. նրան հասնելու, նրան նմանվելու միակ միջոցն՝ անընդհատ ինքնակատարելագործվելն է:

Թեպետ, հասարակական-քաղաքական ստիպողական հանգամանքների բերումով Քրիստոսին և Մարիամ Աստվածածնին նվիրված վիպերգերը թուրքերեն են հորինվել, սակայն այդ կարգի գողտրիկ ստեղծագործությունները վկայում են, որ հայ քրիստոնյան, եթե նույնիսկ փոխել է լեզուն, բայց հավատը՝ երբեք: Հատուկ սիրով ու խանդաղատանքով են հյուսված Հիսուս Քրիստոսի Ս. Մենդյան ավետիսները՝ ըստ Ավետարան Մատթեոսի և Ղուկասի<sup>8</sup>:

Նէ՞ սահաթ, քի Քրիստոսս դօղդու,  
Ավետի՛ս,  
Իւստինէ նուր, ըեհմսն սլղու,  
Ավետի՛ս,  
Հէր չօբանլար իշիթտիլէր,  
Ավետի՛ս,  
- Բու նէ՞ սէվդա դըր դէգիլէք,  
Ավետի՛ս,  
Մելքոն, Գասպար և Պաղտասար,  
Ավետի՛ս,  
Իւչի բիր կիրգիլէք մաղարայա,  
Ավետի՛ս:

Ի՞նչ ժամ էր, որ Քրիստոսս ծնվեց,  
Ավետի՛ս,  
Վրսն լույս ու շնորհք թափվեց,  
Ավետի՛ս,  
Բոլոր հովիվները լսեցին,  
Ավետի՛ս,  
- Այս ի՞նչ հրաշք է ասացին,  
Ավետի՛ս,  
Մելքոն, Գասպար և Բաղդասար,  
Ավետի՛ս,  
Երեքը մեկ մտան քարայր,  
Ավետի՛ս<sup>9</sup>:

Կիրիկիացիները ցավով ու խոր ափսոսանքով են վիպել Քրիստոսի խաչելության սրտամորմոք դրվագները, որոնք առկա են Մատթեոս, Մարկոս և Ղուկաս ավետարանիչների մոտ<sup>10</sup>:

Ուրբաթ գիւնի Քրիստոսս ազիգ  
խաչա դիքիլդի,  
Հէմ գիւնէշը իգէրինէ սիւահ փէրդէ  
չէքիլդի,  
Սուրբ կոյս Մարիամըն բէլը-բօյնը  
պիւքիլդի:

Ուրբաթ օրը Քրիստոսին  
սուրբ խաչին հանեցին,  
Եվ արևի շողերի դեմ սև վարագույր քաշեցին,  
Սուրբ կոյս Մարիամի մեջքն  
ու վիզը ծռեցին<sup>11</sup>:

<sup>7</sup> Վ. Ս վ ա զ լ յ ա ն. Ամերիկահայոց բանահյուսությունը (անտիպ գրառումների հավաքածո):

<sup>8</sup> Աւետարան ըստ Մատթէոսի 1:18-25: Աւետարան ըստ Ղուկասի 2:1-7:

<sup>9</sup> Կիրիկիա, էջ 144:

<sup>10</sup> Աւետարան ըստ Մատթէոսի 27:32-50: Աւետարան ըստ Մարկոսի 15:21-32: Աւետարան ըստ Ղուկասի 23:26:

<sup>11</sup> Կիրիկիա, էջ 146:

Եւ այս դառնաղետ իրողության դեմ ըմբոստանալով կոչ է արվում մեղավորներին, քանի ուշ չէ. դարձի վաղ, ասաշխարհիւ և ինքնակատարելագործման միջոցով Քրիստոսի հեղ ու բարի վարքին նմանվել.

Եա՛, գիւնահաճա՛ր, թէօբէա գէլ՝  
Վաքըթ րօշա գէչիօր,  
Բիր դէօնիք բաք խաչա չըխան  
Հիսուսա,  
Չաղըրըօր էլի՛, էլի՛ Սուրբ Գօղ-  
գօթա դաղընդան,  
Քարա թիքէն դիշլիլիօր Իսրայէլի  
բաղընդան,  
Քանլար աքար էթրաֆընդան՝ հէ՛մ  
սաղընդան, հէ՛մ սօլդան,  
Եա՛, կիւնահաճա՛ր, թէօբէա գէլ՝  
Վաքըթ բօշա գէչիօր,  
Բիր դէօնիք բաք մէլէքլէրի թա-  
բուրը թէղ օլաշղը սէմանդան:

Ա՛յ, մեղավո՛ր, դարձի արի՛  
ժամանակը զուր է անցնում,  
Ետ դարձիր, տես խաչին հան-  
ված Հիսուսին,  
Նա կանչում է կրկի՛ն, կրկի՛ն -  
Սուրբ Գողգոթա լեռից,  
Սև փուշը հավաքել են Իսրայե-  
լի պարտեղից,  
Արյունները թափվում են և՛ ա-  
ջից, և՛ ձախից,  
Ա՛յ, մեղավո՛ր, դարձի արի՛  
ժամանակը զուր է անցնում,  
Ետ դարձիր, տես հրեշտակների  
թավորն իջնում է երկնքից<sup>12</sup>:

Իսկ երբ Հիսուս Քրիստոսը խաչվելուց հետո կրկին հարություն է առնում, ինչպես հիշատակված է ավետարանիչներին կողմից<sup>13</sup>, այդ արդեն կյանքի հաղթանակն է մահվան նկատմամբ, այդ լավագույն ապագայի նկատմամբ մարդկության հավասան է, որը կլիլիկյան «Համբարձման և արդեբուրում» արտահայտվում է անդրժիրիմյան կյանքի և հավիտենական երջանկության դրախտի դաղափարով.

Ա՛յ, մէնթիվա՛ր, մէնթիվա՛ր,  
Մէնթիվարըն վախթը վար.  
Մէնթիվարը սէվէնի՛  
Դրախտա բէշ թախթը վար:  
Հանէ՛, աղջի՛կս, հանէ՛,  
Ասօր բարի տարի է:

Վիճակ, վիճակ, ջան՝ վիճակ,  
Վիճակն ունի ժամանակ.  
Վիճակ հանել սիրողը՝  
Դրախտում ունի հինգ բազ-  
մոց:  
Հանի՛ր, աղջի՛կս, հանի՛ր,  
Այսօր բարի տարի է<sup>14</sup>:

Աստվածաշնչային մոտիվներով են հյուսված նաև կլիլիկյան հայերից մեր դրի առած և անհետ կորստից փրկած մի շարք ինքնատիպ հեքիաթներն ու զրույցները. «Խըսմէթէղ իվիլ չիս ուտի» (Բաժնիցդ ավելի չես ուտի), «Ըրընտըթին էրօ՝ ճուրը քարէ» (Լավություն արա՛ ջուրը գցիր), «Նալը մեխի վերածող Աստված» հեքիաթները<sup>15</sup>, ինչպես նաև աստվածաշնչային «Նոյ Նահապետը», «Հայր Աբրահամի ուխտը», «Հօբի ապուրը», «Ա-

<sup>12</sup> Նույն տեղում:  
<sup>13</sup> Աւետարան ըստ Մատթէոսի 28:1-10: Աւետարան ըստ Ղուկասի 24:1-12: Աւետարան ըստ Յովհաննէսի 20:1-10:  
<sup>14</sup> Կլիլիկա, էջ 147:  
<sup>15</sup> Նույն տեղում, էջ 43-60:

նառակ որդին», «Երկու եղբայրներ» գրույցները<sup>16</sup>, որոնք սոսկ աստվածաշնչային դրվագների վերարտադրություններ չեն, այլ՝ ենթարկվելով րանաՀյուսուեթյանը հատուկ փոխակերպության (transformation) օրինաՀափուեթյուններին, հաճախ աստվածաշնչային կերպարներն ու իրողուեթյունները հարմարեցրել են իրենց կյանքի պայմաններին: Օրինակ՝ «Մուսա լեռ - Մովսեսի լեռ» տեղանվանական ավանդուեթյան մեջ Մուսա լեռան անունը կապվում է աստվածաշնչային Մովսես Մարգարեի հետ<sup>17</sup>: Ըստ կիլիկյան տարբերակի, եգիպտական լծի տակ հեծող իսրայելացիների փոխարեն հայերը հետապնդվում են թուրքերի կողմից: Անելանելի պահին հայերի առաջնորդ Մովսես Մարգարեն աղոթում է Աստծուն, որի հրամանով Միջերկրական ծովը բաժանվում է երկու մասի, հայերն անցնում են ու փրկվում, իսկ թուրքերը ծովի ալիքների մեջ խեղդվում: Մովսես Մարգարեն Ասածու հրամանով գավազանը խփում է գետինն և սկիզբ է ստնում Ռրոնտես գետը: Պապական հայերն ուրախանում են, ջուր խմում, լվացք անում, այնտեղ բնակուեթյուն հաստատում, և այգ վայրը կոչվում է Մովսեսի լեռ կամ՝ Մուսա լեռ:

Կերպարների և իրադարձուեթյունների նույնանման փոխակերպում է նկատվում նաև «Հայի, թուրքի օրհնուեթէնը» ավանդազրույցի մեջ, որի հենքը Իսահակի մասին աստվածաշնչային հայտնի գրույցն է<sup>18</sup>: Ըստ Աստվածաշնչի, եղբայրներից մեկը՝ Հակոբը, խարդախուեթյամբ ստանում է հոր օրհնուեթյունը: Կիլիկյան տարբերակում Իսահակը հայ է, ունի հայ կին, ըայց նրանց տանն ապրող թուրք աղախնի տղան, չարաՀասկուեթյամբ Իսահակի կուրուեթյունը, ճարպկորեն ստանում է նրա լիասիրտ օրհնուեթյունը: Իսահակն ասում է.

- Շի՛ւտ ապրէս, զօՀա՛խ տղաս, ծի՛ւս, ծաղկի՛ս, բազմանա՛ս, ձէն Հէգնո՛ւս, իլվի՛ս, առանց քրտնիլ ապրա՛ս:

- Ես՛ա ապրես, ճարպի՛կ աղաս, ծլե՛ս, ծաղկե՛ս, բազմանա՛ս, նժույղը հեծնե՛ս, դրոսնես, առանց քրտնել ապրե՛ս<sup>19</sup>:

Իսկ երբ հայ տղան անտառից հատուկ ընտրուեթյամբ որսած, խնամքով սլատրաստած խորովածը հագուեթյամբ թրթիռով մատուցում է հորը, հանկարծակիի եկած Իսահակն ասում է.

- Հէ՛յ վախ, իմ կայր աչվընին, վէլ հասըլ գէս խաբից զադ թուրք խղմաթղէն տղան՝ զիմ յառջի օրհնուեթէնը ան առուվ: Եավրո՛ւմ, էգօ՛, քի ալէ օրհնիմ եէփր տօն քարի տյուկը սէրմ ցանիս, սէրմդ թըզ բուսնա. դօն քէ քրտընքում ապրաս:

- Հե՛յ վախ, իմ կույր աչքերին, երեի ինձ խաբեց այդ թուրք աղախնի տղան՝ իմ առաջին օրհնուեթյունն ինքն առավ: Զավա՛կս, արի՛, քեղ ևս օրհնեմ երբ դու քարի տակին սերմ ցանես, սերմդ թող բուսնի. դու քո քրտինքովդ ապրես<sup>21</sup>:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 71-77.

<sup>17</sup> Մուսա լեռ, էջ 110.

<sup>18</sup> Հին Կտակարան, Ելք 14:5-31, 15:1-19, 17:2-6, նաև՝ Թուեր 20:6-13:

<sup>19</sup> Հին Կտակարան, Մենդոյ 27:1-29:

<sup>20</sup> Կիլիկիա, էջ 74:

<sup>21</sup> Նույն տեղում:

Սյուժետային գծի ուրույն զարգացումը հասնելով հանգուցալուծման, աստվածաշնչային զրույցին հաղորդում է ոչ միայն բարոյախոսական երանգ, այլև՝ հասարակական-քաղաքական հնչեղություն: Ջրույցն ավարտվում է դատասլարտող եզրակացությամբ.

Ադիւր համուր չուր համօ հայր չարչարանքում կուբանա, կուեսպրա, ամա թուրքը՝ աուունց քրտնիլ դուեսր-րա. դամէն՝ քուվը, ծէնը՝ սիւկը կու-պատվա, տրվադ մէօկ ալէ կուշատնան:

Դրա համար մինչև հիմա հայը չարչարանքով է աշխատում ու ասլրում, բայց թուրքը՝ աուանց քրտնել է ասլրում. դաշույնը՝ կողքը, նժույզը՝ տակը գլուսնում է, մկների նման էլ շատանում են<sup>22</sup>:

Հայի և թուրքի բարոյական առաքինությունների հասկացությունների տարբերություն, Աստվածաշնչի հրաշագործ զորություն և նույնիսկ նրա անաչառ ու պատահասող կարողության մասին է ավանդվում «Մուրադենց Ոսկի Ավետարանը» ինքնատիպ զրույցում<sup>23</sup>: Թուրք Մավալիի կողմից հայկական օջախից հափշտակված Ավետարանը, երբ տեսնում է, որ Մավալին առևանգել, իր տունն է բերել ու թաքցրել նաև մի հայ աղջկա, չի հանդուրժում կատարված անօրինությունները և, մարդկային լեզու առնելով, սկսում է բանադրել. «Մավալի, տա՛ր ինձի, իմ աեղը դի՛ր, թէ չէ՛՝ քեզի կգցեմ երկու ցուլերու մեջտեղը՝ քեզ կսպանեն»: Մավալին չի անսում Ավետարանի բարի խորհուրդը, և հանկարծակի հրգեհից վառվում է նրա տունը, մեռնում են նրա կինն ու երեք երեխաները, իսկ Ավետարանը՝ հուսկ մնում է անվթար: Սարսափահար Մավալին տեսնելով այդ հրաշքը, Ավետարանը տանում, հանձնում է հայ տիրոջը: Այդ խորիմաստ զրույցի միջոցով կիրիկիացիները հաստատում են այն կարևոր, սկզբունքային գաղափարը, ըստ որի Աստվածաշունչն Աստծո շունչն է, նրա խոսքը, նրա սլատգամը, և ով չենթարկվի Աստվածաշնչի սլատգամներին՝ կպատահասվի, քանզի անարգար սրտքը հավասար է մեղքի, իսկ մեղքի գինը՝ մահ է:

Հայոց ցեղասպանության ողբերգական օրերին, տեղահանության ճամփաներին, Դեր Զորի, Ռաս ու Այնի և այլ կենդանի գերեզմանոցներում միլիոնավոր անմեղ հայեր անխնա նահատակվեցին, բայց քրիստոնեական հավատքից և Աստվածաշնչի գաղափարներից չհրաժարվեցին.

Դէր Զօր դէգիբլէրի բիյուք քասա-բա,  
Քէսիլէն էրմէնի գէլմէզ հէսաբա,  
Օսմանիլը էֆրաթը դէօնմիշ դասա-բա.  
Դինը բին ուղրընա էօլէն էրմէնի:

Դեր Զոր կոչվածն էր մի մեծ տեղավայր,  
Մորթված հայերին էլ հաշիվ չկար,  
Օսմանցի մեծերը մսագործ դարձան.  
Հայերն են զոհվում հավատքի համար<sup>24</sup>:

<sup>22</sup> Նույն տեղում:  
<sup>23</sup> Նույն տեղում, էջ 75-76:  
<sup>24</sup> Վ. Ս վ ա դ լ յ ա ն. Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայու-թյուններ. Երևան, 2000, էջ 419:

Իսկ հանուն քրիստոնեական հավատքի գոհվող հայերի միակ հույան ու ապավենը Աստվածն էր.

Դէր Զօր չէօլիւնդէ եարալը  
չօք դըր,

Գէ՛լմէ. դօքթօ՛ր, դէ՛լմէ. չարէ-  
սի եօ՛ք դըր,

Ալլահյան բաշիսա քիմսիմիզ  
ևօ՛ք դըր,

Դինինին ուղրունա էօլէն էր-  
մէնի:

Դեր Զորի անասատում վիրավոր  
չատ կա,

Մի՛ գա, բժի՛չկ, մի՛ գա, մեկ է հույս  
չկա,

Աստծուց բայլի էլ « չ ոք չկա,  
Հաւսն են գոհվում հավատքի հա-  
մար»<sup>25</sup>.

Սահմակեցուցիչ տարաբնույթ տեսարաններով առկեցուն հարյուրից ա-  
վելի քառյակներ ենք գրի առել:

Մեր գրի առած հուշերի մեջ բազմաթիվ վկայություններ կան, թե ինչ-  
պես անգահանության անսլաամելի առապանքների ընթացքում հայերը  
դիմել են Ասածու ողորմածությանը: Մեջբերենք Ամասիացի Ընծա Ճեմ-  
պերճյանի (ծնված 1898 թ.) պատմած հուշից մի հատված. «...Հասանք մի  
անկ, ուր այդ թուրքերը ուրիշ թուրքերի հանձնեցին մեղ: Սրանք ավելի  
զազան էին: Սրանք սկսեցին իրենց բաժին հասած թալանը, կողոպուտը՝  
ծեծելով ու խոշտանգելով: Այդ ժամանակ երկու դարիթներ իրար հետ  
սկսեցին մրցել: Մեկի ձեռքին մի փոքրիկ երեխա կար հափշտակված,  
մյուսն էլ՝ իմ եղբոր գրկից խլած իմ փոքր տղաս: Սրանք մրցում էին, թե  
որ մեկերնին կարող են հեռու նետել իրենց ձեռքին: Իմ փոքր տղայիս  
էնպես գցեցին հեռու, տաք ավազի ու քարերի վրա, որ խեղճը ջարգ ու  
խուրդ եղավ: Ես տեսա էգ բոլորը՝ ինձ թվաց, որ խելագարվում եմ, սկսեցի  
լաց լինել, ողբալ. բայց ինձ էլ բռնեցին ու գոռով հանեցին հագուստներս,  
ինչպես մյուսներին ևս, և սկսեցին ոսկի փնտրել: Մայրս ընդամենը քա-  
ռատուն տարեկան էր, նրան էլ մերկացրին, անսան ոսկի չկա, բռնեցին  
զցեցին Եփրատ գետը: Ես ե. իմ քույրերը լաց ենք լինում, ուլրում, բայց  
զազանը՝ զազան է և իր որսը հոշոտում է ինչպես որ ուզում է: Այս վեր-  
ջին հարվածին իմ մի քույրը չգիմացավ, մեր մորը ետևից ինքն էլ իրան  
զցեց Եփրատ գետը: ...Այդ իրարանցումին մեջ ինձի կթվար, որ ես հոգե-  
կան խանգարում եմ ստացել արգեն: Քանի որ չէի զգում, թե ի՞նչ է կա-  
տարվում ինձ հետ: Միայն աղոթում էի Աստծուն, որ մեզ ազատի այդ  
տանջանքներեն, և հրաչք պատահեցավ: Տեսիլքի պես Մարիամ Աստվա-  
ծածինը իջավ իմ առաջ գլխին մեծ լուսապսակով և ինձի ըսավ այս խոս-  
քերը. «Աղջի՛կս, քո անունը Ընծա է, այսինքն դու Աստծո տված սլարդեն  
ես, հավատքդ չուրանաս, փրկությունը մոտ է, հավաքի՛ր քո ուժերը, քա՛ջ  
եղիր»: Եվ տեսիլքը անհետացավ: Այդ տեսիլքից հետո ես նոր ուժ ստա-  
ցած շարունակեցի իմ ճամփան...»<sup>26</sup>:

Այնպես որ Աստծո և Մարիամ Աստվածածնի տեսականներն իրենց  
հրաշագործ գորությամբ համբերություն և տոկալու կամքի ուժ են ներշն-

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 424:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 358-359:



չել տառապյալներին: Քրիստոնեական խաչը ևս դարձել է փրկարար՝ արաբական անապատներում մոլորված, ըռնի հավատափոխ եղած, դեմքերը կապույտ մեղանով դաջված մեծ ու փոքր հայ որբուկների համար, որոնք թեպետ մուսացել էին իրենց մայրենի լեզուն, բայց հոգով հավատարիմ էին մնացել քրիստոնեական հավատքին, նրանց մեկ խաչակնքումը որրահավաքների համար դարձել էր քրիստոնեական ծագումն ապացուցող փաստավայրթյուն: Թուրքիայի Հայկական ազգային Սուրբ Փրկիչ Հիվանդանոցում այդ մասին է մեզ պատմել դեմքն ու ծնոտը գաջված 87-ամյա Սիրենա Ալաճաճյանը (ծնված 1910 թ.). «...Աս ամերիկացիները ինձի իրենց գիրկը առին, ինձի շաքար-շոկոլա տվին: Ես մտածեցի, որ ասոնք լավ մարդիկ են: Աս ամերիկացին ըսավ.— Բեյբի՛ (անգլերեն՝ փոքրիկ — Վ. Ս.), խաչ ինչպե՞ս կհանեն,— և սկսավ երեք մատները մեկ ճակատին տանիլ, մեկ կրծքին վրա տանիլ, իբր խաչ կհաննե:

Ես որ աղ տեսա, ըսի.— Լէ՛ (արաբերեն՝ ոչ — Վ. Ս.), տնա՛նկ չէ, ասա՛նկ է,— և իմ աջ ձեռքի երեք մատներով սկսեցի ճիշտ ձևով խաչ հանել:

Ամերիկացիները ադ տեսնելուն պես՝ ուրախ ծափ ավին և ըսին.— Բրավո՛վո՛, շի իզ արմինըն (անգլերեն՝ կեցցե՛ս, նա հայ է — Վ. Ս.): Ադ ձևով հասկցան, որ ես հայու զավակ եմ...»<sup>27</sup>:

Սակայն ողբերգական այդ օրերին հայ ժողովրդի հոգում վերագարթնեց դարերի խորքից, ժառանգաբար, արյան հետ եկող «Մահ իմացեալը» ստրուկ կյանքից նախընտրելու և բռնությանը զենքի ուժով դիմադրելու հերոսացման իր խիզախ ոգին: Այս սլարադայում արդեն, առաջնորդվելով աստվածաշնչային «Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման»<sup>28</sup> գաղափարով, Մուսա լեռան, Ուրֆայի և այլ վայրերի հայերը «Գինսըզէն հախին իմանսըզը կուզը» (Անհավատի հախից անխիղճը կլա)<sup>29</sup> կարգախոսով ինքնապաշտպանության դիմեցին: Հատկանշական է այն, որ Մուսա լեռան հերոսամարտի չորս վճռական ճակատամարտերի ընթացքում, ըստ հերոսամարտի մասնակից վերապրողների պատմած հուշերի, Աստված ևս աջակցել է իրենց, աննկատելի դարձնելով լեռան զագաթին կովողների դիրքերը:

Մուսա լեռան հերոսամարտի մասնակից Հովհաննես Իփրեջյանը (ծնված 1896 թ.) այսպես է նկարագրել աստվածային այդ հրաշքները. «...Տղաքը սկսան զոռ տալ. ամեն կողմեն գյուլլաները կուգային ծառերուն կկտնենին, մեզի չէին կտնի: Ադ ալ Աստծո կամքն էր: Հրա՛շք էր:

Թուրքը հրաման տվեց մեր լեռը կրակի տալ, ամմա լեռը չվառվեց. քիչ տեղ մը վառավ: Հրա՛շք էր: ...Որ կռիվը կսկսեր՝ ճերմակ ամպ մը կուգար մեր լեռը կփակեր, անոնք մեզի չէին տեսնար, ամմա մենք իրենց կտեսնայինք վերևեն, ծառերուն մեջեն: Ադ ալ Աստծո հրա՛շքն էր...: Գիշերով կիջնայինք լեռեն, բաղերեն պտուղ կհավաքեինք, որ տանենք ուտենք: Մեկ օր լեռից իջանք, ես, հերս, մեր հարևան Մուսան: Ասկյարները եկան ճիշտ դրուխնուս վրա կայնան, բայց մեզ չտեսան՝ գնացին: Հրա՛շք է, չէ՞...»<sup>30</sup>:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 307:

<sup>28</sup> Հին Կտակարան, Ելք 21:24, Ղեւզական 24:20:

<sup>29</sup> Մուսա լեռ, էջ 147:

<sup>30</sup> Վ. Ս վ ա գ լ յ ա ն. Հայոց ցեղասպանություն, էջ 282:

Հետագա պատմական իրադարձությունների ընթացքում ևս քրիստոնեական խաչի նշանը հինգ հազար մուսալեոցիների փրկության խարխուլ է դարձել՝ նրանց մահից կյանք առաջնորդելով: Մուսա լեռան Հերոսամարտի մասնակից Մովսես Փանոսյանը (ծնված 1885 թ) մեզ պատմել է. «...Քառասուն օրեն ավելի կովում էինք՝ օր ու գիշեր, ալ ուժ չէր մնացել, ուտելիքն ու վառողն ալ պակասած էր...: Մեր թիկունքի կողմը Միջերկրական ծովն էր, հոն գիշերները խարույկ կվառեինք, որ դեմեն անցնող նավ ըլլա նե, տեսնա մեզի՝ մոտենա: Օրվա մեջ ալ արդեն պատվելի Անդրեասյանը մեծ չարչաֆի՝ սավանի մը վրա կարմիր խաչը նկարած, կախել տված էր լեռին դռը...: Օրեր ետքը, վերջապես ծովին խորքը նավ մը երևաց: Կրրըկյաններուն տղան աղվոր կըղար, նետվեց ծովը, սկսավ լողալ: Անոր վիզեն երկաթե տուփ մը կար կախված, մեջը ֆրանսերեն գրված նամակ մը կար: Նավուն մեջեն գյուլրիներով՝ հեռագրիտակներով կնային, կտեսնան, որ մեկը կըղա դեպի նավը, կօգնեն, նավ կրարձրացնեն: Կըրըկենց Մովսեսը Հեմեն ծունկի կուզա, խաչ կհանե, ըսելու համար, քի քրիստոնյա ենք, քանի որ ինքը ֆրանսերեն չէր գիտեր, որ խոսա: Գրված նամակը կհանե կուտա կապիտանին, անոնք կկարդան, կհասկնան, քի մոտ հինգ հազար հայ քրիստոնյա մուսալեոցիներ լեռին վրա Աստծո փրկությանը կսպասեն...»<sup>31</sup>:

Մուսալեոցիները ստույգ մահից փրկվում են, ֆրանսիական հաճանավորի աջակցությամբ տեղափոխվում են Պորտ Սալիդ և չորս սարի դոյատեում անապատային վրանաքաղաքում: Նրանց քաջությունները ֆրանսիական բանակին կից ստեղծում են Հայկական լեզեոնի կորիզը և Արարայում՝ Պաղեստինի մոտ, հակահարված են տալիս դերմանա-թուրքական զորքերին՝ նվաճելով ոչ միայն վայրուն հաղթանակ, այլև տունդարձի իրավունք: Այդ ժամանակ ավելի շոշափելի է դառնում հայրենի եզերքի կարոտը, և հյուսվում է ժողովրդական հետևյալ երգախառն աղոթքն առ Աստված.

...Եսարձա խնդրիցա՝  
Այարում ձիօն հիզնիլա,  
Զէպէլ Մուսա ուրթիլա,  
Թզինէն թէօզ քաղիլա,  
Ունդայգինէն ունդայգ քաղիլա:

...Աստծուց խնդրեցի՝  
Թամբած ձի Հեմենել,  
Դնալ Մուսա լեռ,  
Թզենուց թուղ քաղել,  
Ընկուղենուց ընկուղ քաղել:<sup>32</sup>

Եթև ժողովրդական այս ստեղծագործությունը պորտսալիզյան կյանքի (1915-1919) գեղարվեստական արձագանքն է, ապա ավելի ուշ՝ 1940-ական թվականներին Այնճարում ապրող մուսալեոցին նույն երգի հենքի վրա նոր ժամանակների նոր երազներ է փայփայում՝ ինչպես միշտ դիմելով իր բարեգութ և հարահաս Աստուծոն.

Եսարձա խնդրիցա՝  
Այարում ձիօն հիզնիլա,  
Հայաստան ուրթիլա,  
Մաքթաբ ուրթիլա,

Աստծուց խնդրեցի՝  
Թամբած ձի Հեմենել,  
Հայաստան մեկնել,  
Դսարուց հաճախել,

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 280.  
<sup>32</sup> Մուսա լեռ, էջ 133:

Խիլք ու շնիրք սուրվիլա,  
Միր Վաթանը շինցընիլա:

Խելք սւ շնորհք սովորել,  
Մեր Հայրենիքը շենացնել<sup>33</sup>:

Ու գալիս էին Հայրենադարձները՝ լի կարոտով ու խանդավառությամբ: Գալիս էին՝ երգելով. «Սովետական աղատ աշխարհ Հայաստան»: Գալիս էին նրանք իրենց Հայրենի քույր-եղբայրների հետ ձեռք ձեռքի տված՝ Երկրորդ աշխարհամարտից Հայրենիքի ստացած վերքերին սպեղանի գնելու: Այդ ազնիվ ու վեհ նպատակի համար բանվորները բերում էին իրենց բազկի ուժը, արհեստավորները՝ իրենց ձեռքի շնորհքը, մտավորականները՝ իրենց գիտելիքները, հարուստները՝ իրենց ունեցվածքն ու գործարանները, ծնողները՝ իրենց ղավակներին, որոնք, օտարությունից ազատագրվելով, սիրտի մեծանային որպես ազնիվ հայ-քրիստոնյաներ...

Սակայն այլ էին նրանց սպասող իրական կյանքի պայմանները: Միջերկրական ծովի բարեխառն օդերից դեպի կլիմայական շեշտակի փոփոխություններ ունեցող Հայրենիքը միայն աշխարհագրական տեղաշարժ էլի հայրենադարձների համար: Հետպատերազմյան համընդհանուր դժվարությունների հետ միասին այն նախ և առաջ ենթադրում էր հասարակական, քաղաքական ու հոգևոր կյանքի նոր սոցիալիստական կացութաձև, իր արտաստվոր համակարգով ու անհեթեթ արգելակումներով, որոնք հաճախ անհասկանալի ու անըմբռնելի էին նորեկներին: Վերջիններս դեռ հազիվ սկսել էին ընտելանալ կյանքի նոր պայմաններին, երբ 1949 թ. կրկնվեց 1937-ը, և նրանցից շատ-շատերին հազարավոր այլ անմեղներին հետ քշեցին Սյբիր...

Այդ տարիների հետապնդումներից վախվորած կիլիկիացիներից մեծ դժվարություններ գրի ենք առել ժողովրդական ինքնատիպ բազմաթիվ աղոթքներ, որոնք ոչ միայն կիլիկյան զանազան բարբառներով են, այլև՝ թուրքերենով<sup>34</sup>:

Մեջբերենք նմուշներ: Զեյթունի բարբառով. բանասաց՝ Զարուհի Գեսխանյան (ծնված 1898 թ.).

Իմ Ասպօծը ըյկնօցը իմ իյիսը կօ հէ-  
յէ,  
Ասպօ՛ծ, հիկկօզ զույպօն նամ.  
Ինծիդէ չցօցընէս սօլուզտօցս ցօվը,  
տէյտը,  
Ճույցօնք մը էնունց պտի նա նէ՝  
թուղ ինծիկէ նա,  
Իշալլա՛հ, իս անիւնց ցօվը, տէյտը  
չիմ տիսնու,  
Ասպօ՛ծ ինծիկէ ուտօց-ձէոց չձգիս.  
Իյգու սահաթէն հիկկէս առնուս.  
Պաշխին միւհտաճ չի նամ.  
Փօռքդ շօտ թըղ նա.  
Ամէն:

Իմ Աստվածը երկնքիս է նայում  
երեսս,  
Աստվա՛ծ, հոգուտ մատաղ լի-  
նեմ.  
Ինձ չցույց տաս իմ զավակների  
ցավն ու հոգսը,  
Եթե նրանց փորձանք է պատա-  
հելու թող ինձ լինի,  
Աստվա՛ծ տա, ես նրանց ցավն  
ու հոգսը չտեսնեմ,  
Աստվա՛ծ, ինձ ոտքից-ձեռքից  
չձգես.  
Երկու ժամից հոգիս առնես.  
Ուրիշի հույսին չմնամ.  
Փառքդ շատ թող լինի.  
Ամեն<sup>35</sup>:

<sup>33</sup> Նույն տեղում:  
<sup>34</sup> Կիլիկիա, էջ 247-250:  
<sup>35</sup> Նույն տեղում, էջ 247:

Մուսա լեռան բարբառով. բանասաց՝ Մարիամ Բաղդիշյան (ծնված 1909 թ.).

Փա՛ռք Քրիստոսին, քի վիրրնում  
հիկկէս օռ,  
Հիսուսը՛ս, եսս աշխուր մը՝ զրկէ  
զէս,  
Մտուցս, վիտուցս մը՝ իսկէ զէս,  
Քի առքավութունին մը՝ զրկէ զէս.  
Հիսուսը՛ս, ընդհանուրէն՝ զսմաթը  
աէօր,  
Ձէմ չօճըլսնէն ալէ.  
Հիսուսը՛ս, սաղ ձառըդ զէ՛ր երվը-  
նէս  
Շնիրքում, խիլքում, նամըսում,  
Շարաֆում եաշամըշ իւրօ  
Ընդհանուրէն, զէս ալէ.  
Ամէն:

Փա՛ռք քեզ Քրիստոս, քո ար-  
լունում առ հողիս,  
Հիսու՛սս, այս աշխարհում մի՛  
զրկիր ինձ,  
Ձեռքից, ոտքից մի՛ գցիր ինձ,  
Քո արքայությունից մի՛  
զրկիր ինձ.  
Հիսու՛սս, բոլորին բարիք  
տուր,  
Նաև իմ զավակներին.  
Հիսու՛սս, աջ ձեռքդ դիր բոլո-  
րիս վրա  
Շնորհքով, խելքով, պատվով,  
Հարգանքով ասրեցրու՛  
Բոլորին, նաև ինձ.  
Ամեն<sup>36</sup>:

Մեզ հաջողվել է զրի առնել նաև հայ-քրիստոնեական ծաղում ունեցող  
թուրքալեզու աղոթքներ, որոնք ուղղված են Ասածուն, նրա որդի Հիսուս  
Քրիստոսին: Այդ աղոթքներում հիշատակվում են Գողգոթայի լեռը, բոլո-  
րի մեղքերը քավող սրբերն ու հրեշտակները:

Բանասաց՝ Ստոա Դերմիշյան (ծնված 1896 թ., Մուսա լեռ).

Եաթղըմ, Ալլա՛հ, քալդըր բէնի,  
Սուրբ մէոսնա գալդըր բէնի,  
Դէճէ-գիւնդիւղ դուվա էդէրիմ,  
Ջէնէթիմէ զէօնիլ բէնի.  
Եաթղըմ սաղ եանըմա,  
Դէօնդըմ սօլ եանըմա,  
Հրէշտակլար դէլէճէք,  
Գիւնահըմը աֆ էդէճէք.  
Ամէն:

Պառկեմ, Աստվա՛ծ, սլահսլա-  
նիր ինձ,  
Սուրբ միւռնում թավթախլիր  
ինձ,  
Գիշեր-ցերեկ ուլլիմ կանեմ,  
Որ գրախալ ինձ ուղարկես.  
Պառկեցի աջ կողքիս,  
Շրջվեցի ձախ կողքիս,  
Հրեշտակները գալու են,  
Իմ մեղքերը քավելու են.  
Ամեն<sup>37</sup>:

Հատկանշական է, որ կիրիկիայի հայության ժողովրդական աղոթքները,  
որպես բանահյուսական ինքնատիպ տեսակ, դողտրիկ աղերս-խնդրանք-  
ներ են՝ հորինված խաղաղ կյանքով ասլոող աշխատասեր, ազնիվ, համեստ  
ու խոնարհ մարդկանց կողմից, որոնց միակ ակնկալիքը «Շնիրքում, խիլ-  
քում, նամըսում, շարաֆում եաշամըշ ընիլ» (Շնորհքով, խելքով, պատվով,  
հարգանքով ասլրելն է)<sup>36</sup>: Ժողովրդական աղոթքներ, որոնք երկնավորից ոչ  
այնքան նյութական բարեկեցություն են հայցում, որքան ողեղեն արժեք-  
ներ, որոնք ոչ այնքան անձնական են, որքան՝ անանձնական:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 247:  
<sup>37</sup> Նույն տեղում, էջ 249:  
<sup>38</sup> Նույն տեղում, էջ 247:

Սակայն սլատմական շենչող վերելքներով և ողբերգական վայրէջքներով առկեսուն կիլիկիացիների ժողովրդական բանահյուսության մեջ մշտապես առկա է համընդհանուր մի ցավ՝ կոտտացող մի վերք. այդ երբեմնի չքնաղ երկիր՝ Կիլիկիայի տեսլականն է, նրա չխամրող կարոտը, որը շարունակում է միայլ նրանց հոգիներում, և մշտարթուն բաղձալի երազները երբեք չի մարում...

Ամփոփելով նշենք, որ Աստվածաշունչը, որպես հավատո հանգանակ, գորավիզ է եղել Կիլիկիայի հայության իրարահաջորդ սերունդներին, ծննդից մինչև մահ, իրենց առօրյա կյանքի ու կենցաղի ամենատարբեր հանգամանքներում. և՛ խաղաղ, ստեղծագործ աշխատանքի պոհին, և՛ տեղահանության ու նահատակության ճամփաներին, և՛ թե հանուն Մարդկային իրավանց նրանց մղած դիմադրողական-ինքնապաշտպանական հերոսամարտերում...: Այլ կերպ ասած՝ Կիլիկիայի հայերը աստվածաշնչային գաղափարները, Սուրբ Գրքից վերցնելով, կյանքի են վերածել:

## ОТБРАЖЕНИЕ БИБЛЕЙСКИХ ИДЕЙ В КИЛИКИЙСКОМ ФОЛЬКЛОРЕ

*ВЕРЖИНЕ СВАЗЛЯН.*

### Р е з ю м е

В течение 50 лет мы собирали и исследовали устные народные материалы западных армян, в том числе и киликийских армян, чудом уцелевших после Геноцида армян 1915 г., депортации из Киликии (1921). Библейские идеи, которые всегда сопутствовали им во всем и которые перешли из одного поколения в другое, нашли свое отражение в разных устных народных произведениях: сказках, рассказах, колыбельных, бытовых и праздничных песнях, пословицах и поговорках, загадках, молитвах и т. д., а также в исторических песнях и мемуарах свидетелей – очевидцев Геноцида армян.

## REFLECTION OF THE BIBLICAL IDEAS IN THE CILICIAN FOLK-LORE

*VERZHINE SVAZLYAN*

### S u m m a r y

During 50 years we have inscribed and researched the oral folk materials of the Western Armenians, including the Cilician Armenians, who were saved by a miracle after the Genocide of the Armenians in 1915, the deportation from Cilicia (1921). The Biblical ideas that have accompanied them from generation to generation, have been reflected in their various oral popular creations: in fables, tales, lullabies, custom and festive songs, proverbs and edifications, riddles, prayers, etc., as well as in the historical songs and memoirs of the eye-witness survivors of the Armenian Genocide.